Ամերիկյան գրականության մեջ կարելի է հանդիպել կարծիք այն մասին, որ լիզինգը բնութագրելիս հարկավոր է ելնել պայմանագրի կողմերի մտադրություններից, որոնք իրենց հերթին բնութագրվում են կոնկրետ պայմանագրի կետերին և պարտականություններին համապատասխան[1]: 1981 թվականին ԱՄՆ-ում օրենք ընդունվեց տնտեսական վերականգնման հարկերի մասին (Economic Recovery Tax Act), որը խթանում է տնտեսական զարգացումը՝ անհատ հարկատուների հարկերի նվազեցման ճանապարհով, արագացնում է սարքավորումների և անշարժ գույքի կապիտալ ներդրումների ծախսերի փոխհատուցվելիությունը: 168-րդ հոդվածը հեշտացնում է լիզինգով զբաղվող կազմակերպությունների գործունեությունը:

Լիզինգի իրավաբանական բնույթի տարբերությունը տարբեր երկրներում բացատրվում է այդ երկրներում գործող տարբեր իրավական համակարգերով, տնտեսության զարգացման տարբեր մակարդակներով, տարբեր ավանդույթներով և այլ գործոններով:

ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՊՏՀ ամբիոնի վարիչ, տ.գ.դ.,պրոֆեսոր

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ

Գոյություն ունեն արժեք հասկացության բազմաթիվ մեկնաբանություններ, սակայն տնտեսագետները կենտրոնանում են դրամական արժեքի վրա, որը արտահայտված է անհատ սպառողի նախապատվություններով: Սրա հիման վրա կարելի է ասել, որ արժեքը գոյանում է այն ժամանակ, երբ գոյություն ունի փոխազդեցություն սուբյեկտի և օբյեկտի միջև:

Էկոլոգիային վերաբերող գրականությունը տարբերում է արժեքի երեք փոխհարաբերություններ, որոնք ընկած են հասարակության մեջ ընդունված քաղաքականության և բարոյականության հիմքում: Դրանք են՝ անհատների նախապատվություններով արտահայտվող արժեքը, հանրային նախապատվություններով որոշվող արժեքը, որն իր արտահայտությունն է գտնում սոցիալական նորմերում և ֆունկցիոնալ ֆիզիկական էկոհամակարգի արժեքը: Որոշ տնտեսագետներ բանավիճում են, որ արժեքի տնտեսական չափը ուրույն նշանակված արժեք է, հետևաբար նպատակահարմար չէ այն օգտագործել որպես հասարակական ռեսուրսների տեղաբաշխման համար արժեքի չափման միակ տարբերակ: Էկոցենտրիկ գաղափարախոսության հետևորդները փորձում են իրենց քաղաքականությունը հիմնել նորմերի վրա, որոնք անհատները ընդունում են և որոնք գործողության են դրվում սոցիալական օրենսդրությամբ: Ծայրահեղ բնապահպանության կողմնակիցները շեշտը դնում են ինստրումենտալ «մարդկային արժեքավորությամբ որոշվող» և ներհատուկ նախապատվություններին վերագրվող արժեքների տարբերակման վրա: Նրանք կարևորում են այն փաստը, որը էկոհամակարգի գործառույթները և ներուժը ուրույն արժեքի աղբյուր են: Օբյեկտ-սուբյեկտի և ներհատուկ արժեքի միջև հստակ տարբերությունը դեռ սահմանված չէ: Մարդիկ կարող են ընդգրկել իրենց նախապատվություններում ներհատուկ արժեքի մի մասը:

Ապրանքների դրամական գնահատման վերաբերյալ տնտեսական վերլուծությունը մինչև հիմա փոփոխական վիճակում է՝ չնայած նշանակալի առաջընթաց է դիտվում: Բնության շատ ապրանքների համար պահանջարկի կորի և շուկայական գնի բացակայության պայմաններում արժեքը գնահատելու ոչ շուկայական բազմաթիվ մեթոդներ առաջարկվեցին: Վերջին տարիներին գրականության մեջ նշվում է, որ բնական ռեսուրսների ընդհանուր տնտեսական արժեքը ընդգրկում է և ներհատուկ «գոյության» արժեքը, և՝ ընտրության հնարավորության արժեքը:

Էկոլոգիական և կոէվոլյուցիոն տնտեսական մոդել

Այս մոդելի կողմնակիցները կասկածի տակ են դնում թե՝ կենսաբանական, թե՝ մշակութային դետերմինիզմի հիմնավորվածությունը՝ որպես զարգացման և վերափոխումների բացատրություն: Գոյություն ունի մշտական և ակտիվ փոխներգործություն օրգանիզմի և նրան շրջապատող միջավայրի միջև: Օրգանիզմները պարզապես չեն ընդունում շրջակա միջավայրն այնպես, ինչպես կա, այլ փնտրում են այլընտրանքներ կամ փոփոխում այն: Օրգանիզմները ոչ միայն իրենց շրջապատող միջավայրի հետևանքն են, այլ նաև պատճառը:

Տնտեսական զարգացումը, հետևաբար, դիտվում է որպես փոփոխվող միջավայրին հարմարվելու գործընթաց՝ միաժամանակ հանդիսանալով հենց այդ փոփոխությունների աղբյուրը: Այս տեսանկյունից գոյություն ունեն փոփոխությունների երեք տարբեր աղբյուրներ՝ էկոլոգիական հավասարակշռության խախտում, տեխնիկական կայունության պահանջներ, պահանջմունքների նոր ձևերի զարգացում: Այս աղբյուրներից ոչ մեկը առանձին չի կարող բացատրել բոլոր փոփոխությունները:

Ժամանակի ընթացքում զարգացման գործընթացը հանգեցնում է ռեսուրսների գերշահագործման: Արտադրության տնտեսական համակարգը զարգացման ընթացքում դառնում է ավելի բարդ և ընդգրկուն: Բնական գիտությունները ուսումնասիրող գիտնականների աշխատանքը գերշահագործված կառուցվածքների վրա վերաբերում է համալիր համակարգերի կառավարմանը: Եվ պարզվում է, որ այդպիսի համակարգերի էվոլյուցիան ամբողջովին դետերմինիստական չէ, ոչ էլ ստոխաստիկական, այլ այդ երկուսի համադրումը:

Կոէվոլյուցիոն մոդելը ձգտում է կապ ստեղծել տնտեսական և էկոլոգիական վերլուծությունների միջև: Կոէվոլյուցիայի ժամանակ էներգիայի ավելցուկ է ստեղծվում համակարգերում, որը հետագայում նպաստում է այդ համակարգերի նոր փոխազդեցություններին: Եթե այդ փոխազդեցությունը բարենպաստ է հասարակության համար, ապա զարգացման գործընթացը շարունակվում է: Կոէվոլյուցիոն զարգացման համակարգերը հաճախակի տեղափոխվում են էկոհամակարգերից սոցիոհամակարգ, այսինքն արտադրության գործընթացը, դառնում է ավելի համալիր, և շրջակա միջավայրի շահագործումը մեծանում է: Պետք է նշել, որ կոէվոլյուցիոն

[1] Henry G. Hamel. Op. cit.; Equipment leasing-leveraged leasing; Dekowen R., Reisman A. Equipment leasing.- N.Y., 1979

զարգացման ներուժի ծավալը և տևողությունը դեռ որոշված չեն: Կայուն տնտեսական զարգացման ռազմավարության կողմնակիցները պահանջում են պետության ավելի շատ միջամտություն, որպեսզի շրջակա միջավայրի որակի պաշտպանությունը ավելի խիստ ձևերով իրականացվի: Նրանք նույնպես գտնում են, որ Պարետոյի օպտիմալությունն անկախ է նրանից, թե տնտեսության մեջ ֆիզիկական ծավալը էկոլոգիապես կայուն է, թե ոչ:

Այժմ դիտարկենք զարգացած երկրներում շրջակա միջավայրի հետ փոխկապվածության մի շարք տարածված տնտեսական մոդելներ, որտեղ շրջակա միջավայրի կողմից շուկայի կայունությունը դիտարկվում է ավելի շուտ որպես բացառություն, այլ ոչ թե օրինաչափություն: Հետևաբար համարվում է, որ հնարավոր է կիրառել ոչ դասական տեսության դրույթները՝ խուսափելու համար անարդյունավետ որոշումներից[1]: Դրանց օգնությամբ բացահայտվում են բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման պայմանները և շուկայի ձախողման ազդեցության բնույթը տնտեսական գործունեության արդյունավետության վրա: Նման վերլուծության հիման վրա մշակվում են առաջացած խեղաթյուրումների վերացման միջոցառումներ:

Ներկայացված գրաֆիկում ցույց է տրված, թե ինչպես է շուկան ապահովում այս կամ այն բնական ռեսուրսի օպտիմալ օգտագործումը: Օպտիմալ է համարվում այն լուծումը, որը ներկայացնում է հասարակության զուտ եկամուտը, օգուտը տվյալ ռեսուրսի օգտագործումից:



Ռեսուրսների բաշխման գրաֆիկ

Նշված գրաֆիկում այն ներկայացված է aDb եռանկյունով: Գումարային զուտ եկամուտը մաքսիմալացվում է, երբ արդյունահանման կամ արտադրության համար լրացուցիչ միավոր ռեսուրսի սահմանային ծախսեր դառնում են հավասար սահմանային եկամտին: Դա տեղի է ունենում կորերի հատման Q կետում: Ժամանակակից շուկայի «անտեսանելի ձեռքը» կարգավորում է այդ գործընթացն այնպես, որ Q-ն ցույց է տալիս արտադրության ծավալը: Սահմանային ծախսերի կորը ձգտում է վերև, քանի որ օգտագործվող ռեսուրսների քանակի ավելացումը բարձրացնում է նրա պակասորդայնությունը: Այդ պարագայում, արտադրողների ավելցուկային եկամուտը /նրա շահույթը/ կարող է դիտվել որպես տնտեսական ռենտա: Գրաֆիկում արտադրողների ավելցուկային եկամուտը ներկայացված է aPb տարածքով, իսկ սպառողական ավելցուկը՝ Dpb-ն: Նրանք միասին ապահովում են aDb-ի զուտ եկամուտը:

Եթե ռեսուրսները պակասորդային են, և դրանք հարկ է լինում ռացիոնալացնել, ապա նման ռենտան կարող է աճել նույնիսկ սահմանային ծախսերի անփոփոխ մակարդակի պահպանման դեպքում /տես, հետևյալ գրաֆիկը/:



Ենթադրենք՝ սեփականատերն ունի 75 միավոր պակասորդային ռեսուրս, որը նա ցանկանում է վաճառել: Ընդ որում, նա գիտի, որ կարող է բարձրացնել իր ապրանքի գինը, եթե այդ ռեսուրսի 25 միավորի վաճառքը

[1] Էկոլոգիայի տնտեսական խնդիրների մոդելների հիմնարար վերլուծությունը կատարել են մի շարք գիտնականներ: Տես՝TomTietenberg, Environmental and Natural Resources Economics /Glenview/ III.:Scott, Foresman, 1990/; Sohn M. Hartwick and N. Olewiler,, The economics of Natural Resource Use /New York: Harper @ Row, 1986/:G.Tyler Miller,living in the Enviroment /Belmont, colif.:Wadsworth, 1990/;and Maureen L.Croffer and Wallace E. Oates, "Environmental economics: A survey" .Journal of Economic Literature 30 /June 1992/: 675-740:

իրականացնի հետո: Ռեսուրսների գինը, որը ռացիոնալացվում է՝ կախված օգտագործման ժամանակից, պետք է հավասար լինի զուտ եկամտի ընթացիկ սահմանային արժեքի վերջին միավորին սպառման ցանկացած պահին: Այլ խոսքով, սպառողը պետք է տեսնի տարբերություն այսօրվա կամ վաղվա լրացուցիչ ձեռք բերված ռեսուրսի միջև: Եթե սեփականատերը որոշել է այսօր վաճառել միայն 50 միավոր ռեսուրս, ապա դեֆիցիտային ռեսուրսի շուկայական գինը սահմանվում է Ps-ի հատվածում: Իսկ ռենտան, որը ստացել է սեփականատերը, հավասար է PsabP-ի, այն գտնվում է գնի և սահմանային ծախսերի արանքում: Ռացիոնալացումը և հենց դրանով էլ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը ժամանակի ընթացքում դառնում են հնարավոր սեփականատիրոջ կողմից ռենտան վերցնելու ունակության արդյունքում: Պակասորդի բացակայության պայմաններում ողջ ռեսուրսները պետք է վաճառվեն արդյունահանման ծախսերով՝ P=MC, ողջ 75 միավորը կսպառվի միաժամանակ, և ռենտա չի առաջանա:

Ազատ շուկայի նորդասական տեսության կողմնակիցները հաստատում են, որ ռեսուրսների արդյունավետ օգտագործման պատճառը շուկայական ուժերի ազատ գործելու արգելքն է և սեփականության համակարգի անկատարությունը: Բոլոր ռեսուրսների վերածումը մասնավոր սեփականության կատարյալ շուկայական համակարգը կապահովի դրանց արդյունավետ օգտագործումը: Շուկաները, որոնք հենվում են կատարյալ համակարգի պայմաններում սեփականության իրավունքի վրա, ունեն չորս բնութագրիչ գծեր՝

1. ունիվերսալությունը - բոլոր ռեսուրսները մասնավոր սեփականություն են,
2. բացառիկությունը - հնարավորություն կա թույլ չտալ կողմնակի անձանց իրենց շահերի համար օգտագործել այն ռեսուրսները, որոնք մասնավոր սեփականություն են,
3. տրանսֆերտը - ռեսուրսի սեփականատերը կարող է տնօրինել այն ըստ իր ցանկության, իրացնել ցանկացած պահի,

Նշված պայմանների դեպքում ռեսուրսի սեփականատերը շահագրգռված է՝ մաքսիմալացնելու զուտ եկամուտը դրա վաճառքից կամ օգտագործումից: Այսպես, ֆերմերը, որն ունի հողակտոր, ընտրում է ներդրումների չափը, մշակման մեթոդները և արտադրանքի ծավալը, որոնք կարող են տալ առավելագույն եկամուտ հողից: Այն փաստը, որ հողն ունի արժեք, հնարավորություն է տալիս սեփականատեր ֆերմերին վարկ ստանալու: Եթե նշված բոլոր չորս պայմանները գործում են միաժամանակ, շուկայում կարող է առաջանալ ձնախեղում: Հետևաբար, որպեսզի վերացվի ռեսուրսների անարդյունավետ բաշխումը, սկզբունքորեն բավական է ազատվել շուկայական ձնախեղումից:

Ընդհանուր սեփականության ռեսուրսներ

Եթե դեֆիցիտային ռեսուրսը /տվյալ դեպքում, վարելահողը/ ունի ընդհանուր սեփականության կարգավիճակ և նրա օգտագործումը բաց է բոլորի համար, ապա պայմաններ չեն ստեղծվում շահույթի ստացման կամ էլ մոնոպոլ ռենտայի համար: Նեոդասական տեսությունը հաստատում է, որ նման ռենտայի բացակայությունը ծնում է ռեսուրսների օգտագործման անարդյունավետություն: Կիրառելով այլ մոտեցում՝ վերլուծություն կատարենք ռեսուրսների անարդյունավետ օգտագործման հարցում, եթե ռեսուրսը ընդհանուր օգտագործման համար է նախատեսված: Ներկայացվող գրաֆիկը ցույց է տալիս աշխատանքի փոխհատուցման չափերի փոխկապակցվածությունը, որը կիրառվում է տվյալ հողակտորում, և աշխատողների թվաքանակը:



Պատկերացնենք, որ այդ հողակտորը մասնավոր սեփականություն է: Ելնելով գործնական ենթադրերից՝ հողատերը պետք է վարձի նոր աշխատողներ այնքան ժամանակ, մինչև նրանց սահմանային արտադրանքը իր արժեքով չի համեմատվում աշխատուժի շուկայական գնի /W/ N կետում: Սակայն ելնելով աշխատանքի կրճատվող եկամուտների օրենքից՝ լրացուցիչ վարձու աշխատողի թվաքանակը կրճատում է մեկ զբաղվածի միջին աշխատավարձը: Յուրաքանչյուր լրացուցիչ աշխատողի սահմանային արդյունքը հավասար է դառնում նրա միջին արդյունքին, հանած բոլոր աշխատողների միջին արդյունքի՝ արտադրանքի մեծությունը: Իսկ եթե աշխատողը կվարձվի N-ի սահմանից դուրս, ապա աշխատանքի վարձատրության ծախսերը կգերազանցեն նրա ներդրումը արտադրության մեջ, և հողատերը կկրի վնասներ: Ձգտելով մաքսիմալացնել եկամուտները՝ գործարարը կվարձի N աշխատող, այդ իրավիճակում արտադրված արտադրանքի համախառն ծավալը կլինի AP միջին արտադրանքը բազմապատկած N աշխատողների թվով: Իսկ հողատիրոջ մենաշնորհային ռենտան կկազմի AP CDW:

Հողի օգտագործումից ստացված հասարակության զուտ եկամուտը կոլեկտիվ սեփականության պայմաններում կլինի փոքր, և յուրաքանչյուր աշխատող հնարավորություն կունենա ստանալու իր աշխատանքի ողջ արդյունքը, որը հավասար է արտադրության մեջ զբաղվածների միջին արտադրանքին: Աշխատողների եկամուտները կգերազանցեն նրանց աշխատավարձի մակարդակը մինչև այն պահը, երբ արտադրությունը չի ընդգրկում այնպիսի թվաքանակով աշխատողներ, որոնք առաջ կբերեն միջին արդյունքի իջեցում մինչև

աշխատավարձի չափերը: Դա տեղի կունենա այն ժամանակ,երբ աշխատողների թիվը կհասնի Nc-ին: Թեև արտադրանքի ծավալը կարող է ավելանալ կամ կրճատվել, կախված՝ MP-ի դիրքից /տվյալ դեպքում այն կրճատվում է/, լրացուցիչ աշխատողների կողմից ստեղծված սահմանային արդյունքը լինում է աշխատավարձից ցածր: Եթե ենթադրենք, որ ողջ աշխատուժը կարող է օգտագործվել այլ աշխատանքներ կատարելու համար, որտեղ աշխատողների աշխատանքի արտադրողականությունը հավասար կլինի կամ էլ բարձր W-ի մակարդակից, հասարակությունը կկրի կորուստներ, երբ սահմանային արդյունքը կդառնա W-ի համեմատ փոքր: Nc կետում հնարավոր չէ ստանալ որևէ մենաշնորհային ռենտա: Այս տեսության տրամաբանական եզրակացությունը հետևյալն է. եթե հնարավոր է իրականացնել ռեսուրսների սեփականաշնորհում, հետևաբար կբարձրացվի հասարակության բարեկեցությունը:

Նշենք, որ նման նորդասական մոդելի՝ չափման համար ընտրում են միայն արդյունավետությունը՝ մի կողմ թողնելով հավասարությունը: Նրանք չեն համարում եկամուտների բաշխումը այդ խնդրին առնչվող հանգամանք և մտահոգված չեն այդ վիճակով, երբ ողջ մենաշնորհային ռենտան երկրի ռեսուրսների օգտագործման արդյունքում ընկնում է փոքր խումբ սեփականատերերի ձեռքը:

Համընդհանուր սեփականության նորդասական մոտեցման քննադատությունը

Մեր կողմից դիտարկված մոդելների առնչությամբ եզրակացությունները հնարավոր է կասկածի տակ դրվեն՝ մի շարք նկատառումներից ելնելով: Նախ, առաջին հերթին առաջանում է Լյուիսի մոդելի հետ կապված խնդիր: Այդ մոդելը ելնում է նրանից, որ այն ռեսուրսները, որոնք ընդհանուր սեփականություն են, օգտագործվում են լրիվ զբաղվածության գերակայության պայմաններում: Երկրորդ, աշխարհի երկրներում քաղաքային մասշտաբային գործազրկությունն ուղեկցվում է գյուղական բնակավայրերի զանգվածային գործազրկությամբ, որը հիմք է տալիս հրաժարվել նման նախապայմաններից: Եթե լրացուցիչ աշխատողները նախօրոք զբաղված լինեին ընտանեկան ֆերմաներում, որտեղ սահմանային աշխատանքի արտադրողականությունը ցածր է աշխատանքի արտադրողականության մակարդակից, և հնարավորություն չունենային գտնելու այլ աշխատանք, ապա նրանց սահմանային արտադրողականությունը նոր տեղում կարող է լինել ավելի բարձր, որը կավելացնի միջին արտադրողականությունը և սոցիալական բարեկեցությունը:

Իրական չէ նաև մյուս ենթադրությունը, ըստ որի՝ հողատերերը ձգտում են առավելագույնի հասցնել շահույթը, հետևաբար իրականացնում են արտադրությունը օպտիմալ մակարդակով:

Սակայն նրանք միշտ չէ, որ հանդես են գալիս որպես ջանասեր սեփականատեր և հաճախ հողն օգտագործում են ոչ գյուղատնտեսական նպատակներով: Հողի մասնավոր սեփականության կատարյալ շուկան չի ներկայացնում բավականաչափ պայմաններ նրա արդյունավետ օգտագործման համար: Դա ճիշտ է այլ բնական ռեսուրսների նկատմամբ, հատկապես եթե հաշվի առնենք բազմաթիվ տարբեր ուղղվածություն ունեցող գործոններ, որոնք խանգարում են նրանց օպտիմալ կիրառմանը: Բացի այդ, հողի կենտրոնացումը փոքր թվով խոշոր հողատերերի ձեռքում հարկադրում է փոքր ֆերմերներին շրջանառության մեջ մտցնել ցածր բերքատու հողեր՝ հենց դրանով ուժեղացնելով ճնշումը այն տարածքների վրա, որոնք կանգնում են անտառատարածքի կորստի և անապատացման վտանգի առջև:

Սակայն դիտարկվող մոդելի ամենախոցելի տեղը, եթե ելնում ենք զարգացման դիրքերից, այնպիսի կենսական կարևորություն ունեցող խնդիրների անտեսումն է, ինչպիսիք են հասարակության հիմնական կարիքները: Ըստ նեոդասական մոդելի՝ արդյունավետության կարելի է հասնել նաև այն պայմաններում, երբ հասարակության չափից ավելի հարստությունը ուղեկցվում է ծայրահեղ աղքատությամբ: Եթե զարգացման հիմնական նպատակը համարենք եկամուտների մակարդակի ապահովումը, որը հնարավորություն կտա բարելավելու մարդկանց հիմնական կարիքները, ապա դեֆիցիտային ռեսուրսների բաշխումը դառնում է առավել կարևոր խնդիր:

Դա հատկապես ցայտուն է երևում այն երկրների օրինակով, որոնց օրենսդիր մարմինները, որոնք կոչված են մշակելու և կոորդինացնելու օրենքների կատարումն ու եկամուտների վերաբաշխումը, համալրված են գերազանցապես սեփականատերերով: Հետևաբար ռեսուրսների համատարած սեփականաշնորհումը միշտ չէ , որ հանգեցնում է բնակչության մեծամասնության կյանքի մակարդակի բարձրացմանը:

Նեոդասական տեսությունը իր ուսումնասիրման ուշադրությունից դուրս է թողնում նաև մարդկանց կողմից ընդհանուր ռեսուրսների արդյունավետ օգտագործման այլ պատճառները երրորդ աշխարհի երկրների ագրարային ոլորտում: Առավել արդյունավետ տնտեսությունները՝ ընտանեկան ֆերմաները, երբեմն ձեռնպահ են մնում հողի բերրիության բարձրացմանն ուղղված ներդրումներ կատարելուց, քանի որ վախենում են կորցնել հասարակական հողատարածքը վարձակալության տալու իրավունքը: Բացի այդ, նրանք հաճախ չունեն աշխատուժ վարձելու, ինչպես նաև տեխնիկա և այլ անհրաժեշտ ռեսուրսներ ձեռք բերելու համար միջոցներ, քանի որ չեն կարող վարկ վերցնելու համար գրավ դնել իրենց սեփականությանը չպատկանող հողը: Հետևաբար, ընդլայնելով վարձակալների իրավունքները կամ էլ սեփականության իրավունքով նրանց փոխանցելով իրենց կողմից մշակվող հողերը՝ հավանաբար հնարավոր կլինի բարձրացնել ընտանեկան ֆերմաների արտադրողականությունը:Դրա հետ կապված՝ առաջ է գալիս հետևյալ հարցը, ով պետք է ստանա հողի մասնավոր սեփականության իրավունք սեփականաշնորհման ժամանակ: Եթե հողակտորը դրվի աճուրդի և վաճառվի առավել բարձր գնով, առանց լրացուցիչ պայմանների, դժվար թե համապատասխանի զարգացման նպատակներին:

Մարդկանց բարեկեցությանը հասցված վնասը չի փոխհատուցվում: Նման վնասի օրինակ է ջրային տարածքի և օդային ավազանի աղտոտումը: Քանի որ մարդը հակված չէ կրելու ամբողջական պատասխանատվություն իր գործողությունների համար, հասարակության ընդհանուր վնասը չվերահսկվող անհատական գործունեության հետևանքով էական է:

Նման վիճակի արդյունքը դառնում է ոչ օպտիմալ լուծում: Այս թեզը հիմնավորենք հետևյալ գրաֆիկի օգնությամբ.



ա/ համընդհանուր բարիքներ բ/ սովորական ապրանքներ

Գրաֆիկ. Համընդհանուր բարիքները, սովորական ապրանքները և անհատական գործունեության չվերահսկվող խնդիրները

Որպես օրինակ՝ կարելի է բերել տարածաշրջանին հասցված վնասը՝ անտառահատման, էրոզիայի ուժեղացման, հողի վերին շերտի չորացման, ստորգետնյա ջրի աղբյուրի կորստի, ջրատարների աղտոտման, ջրային ռեսուրսների կրճատման և կլիմայական փոփոխությունների հետևանքով: Որպեսզի վերլուծությունը հեշտացվի, վնասը արտահայտենք դրական էֆեկտի կրճատման ճանապարհով /անտառի պահպանությունը դիտարկենք որպես բարիք ողջ հասարակության համար/:

Առավել էական տարբերությունը ընդհանուր բարիքի և սովորական սպառման աճի միջև նրանումն է, որ միագումար պահանջարկը ընդհանուր ռեսուրսի համար ձևավորվում է՝ միացնելով անհատական սպառման կորերը գերազանցապես ըստ ուղղահայացի այն դեպքում, երբ մասնավոր բարիքների պահանջարկը միանում է ըստ հորիզոնականի: Այդ տարբերություններն արտահայտված են վերևում բերված գրաֆիկում: Դրանք պայմանավորված են նրանով, որ որևէ ընդհանուր բարիքի միավորը կարող է օգտագործվել շատ սպառողների կողմից, իսկ մասնավոր սեփականության ռեսուրսը՝ միայն այն տնօրինողի կողմից:

Ուղղահայացում գումարվում են այն բարիքները, որոնք ստացվել են բոլոր սպառողների կողմից ընդհանուր օգտագործման ռեսուրսների օգտագործումից: Սահմանային ծախսերի մեծությունը, որն ուղղված է ևս մեկ ծառի պահպանմանը, հավասար է, անտառատնտեսության ծախսերին գումարած այդ ծառի այլընտրանքային արժեքը, նրա օգտագործումը,որպես վառելիք, անասնակեր, ատաղձագործության համար:

Բերված գրաֆիկում ծառերի օպտիմալ քանակը հասարակության տեսանկյունից հավասար է Q-ի: Այն պարզվել է միագումար պահանջարկի կորի հատմամբ, գումարած ուղղահայացին MC առաջարկի հորիզոնական կորի հետ: Q կետում ձեռք է բերված հասարակության շահի օպտիմալացումը, տվյալ ռեսուրսի օգտագործումից՝ PmDc: Սակայն քանի որ անհատական սպառողների գործողությունները վերահսկելի չեն, ազատ շուկայի ուժերը ի վիճակի չեն ապահովելու հասարակական առավելագույն շահ: Pm գնի պայմաններում ազատ շուկան կարող է բավարարել B սպառողի պահանջարկը Q_B չափով, միաժամանակ հնարավորություն տալով մյուս օգտագործողին /A/ ստանալու անհրաժեշտ քանակի Q_A ռեսուրս: Այլ խոսքով, A անհատը հնարավորություն է ստանում վերցնելու B օգտագործողի պոտենցիալ եկամտի մի մասը: Նման իրավիճակներում շուկան ապահովում է անտառի պահպանումը միայն Q_B մակարդակում, որը ցածր է օպտիմալից: Անտառի օպտիմալ մակարդակի վերականգնման համար հասարակության տեսանկյունից /Q/ անհրաժեշտ է կառավարության միջամտությունը: Այստեղ առավել ճիշտ լուծումը կլինի պարտադրել A խմբի և B խմբի յուրաքանչյուր անհատ սպառողին փոխհատուցելու իրենց ծախսած ռեսուրսներն այն չափով, որը հնարավորություն կտա ստեղծելու ծառերի պահպանման Q ֆոնդ: Ներդրումների գումարը P_A ✖ Q և P_B ✖ Q հավասար կլինի P_m ✖ Q ծախսերին, որը կապահովի անտառների պահպանման օպտիմալ մակարդակը հասարակության տեսանկյունից:

Շրջակա միջավայրի վերաբերյալ այլընտրանքային տեսությունների ամփոփումը հանգեցնում է հետևյալ երեք տեսակետներին.

1. Չնայած տնտեսագետներն ընդունում են այն փաստը,որ գոյություն ունեն անհատների և հասարակության բազմատեսակ նպատակներ. նրանք աշխատում են դրանցից միայն մեկի տնտեսական արդյունավետության վրա: Սրա պատճառն այն է, որ տնտեսագիտական վերլուծություններում գերակշռում են ապրանքների և ծառայությունների շուկաները: Վերը նշված նպատակը ոչ շուկայական ապրանքների /բնական միջավայրի տարրերի/ առաջարկի և պահանջարկի վրա տեղափոխելը թույլ է տալիս դրանց առնտրում կիրառել տնտեսական գործիքներ /օպտիմալացում, սահմանային վերլուծություն և այլն/: Սակայն միանգամայն հնարավոր է, որ բնական միջավայրի տարրերի տնտեսապես օպտիմալ մատակարարման հայտնաբերումը հասարակության և անհատների մտահոգության պատճառ չէ: Այդ բնական տարրերի հասանելիության պարզությունը ոչ պակաս կարևորություն ունի: Կյանքի որակի վրա, շրջակա

միջավայրի ունեցած դերի անորոշությունը ստիպում է ավելի զգուշորեն վերաբերվել ծախս-օգուտ ստանդարտին: Մարդկանց տարբեր նպատակները, որոնք առնչվում են նաև շրջակա միջավայրին, կարող են փոխել նորդասականների կողմից տրված շրջակա միջավայրի հետագա պատկերը:

2. Որոշ այլընտրանքային տեսակետներում առաջադրվում է այն հարցը, թե սպառողական նախասիրությունների վրա հիմնված համակարգերը կարելի՞ է արդյոք տեղին համարել բնապահպանական հարցերի վերլուծության ժամանակ: Գոյություն ունեն արժեքներ, որոնք մարդկանց կողմից են տրված շրջակա միջավայրի տարրերին և արժեքներ, որոնք գտնվում են հենց շրջակա միջավայրի տարրերի մեջ և մարդկանց կողմից չեն տրված: Դժվարությունը, որը առաջացնում է այդ տարբերությունը, պայմանավորված է մի շարք գործոններով: Առաջինն այն է, որ մարդիկ, իրականում, իրենք են տալիս այդ ներհատուկ արժեքը՝ իրենց նախասիրությունը փոխանցելով բնական միջավայրի տարրերին: Եթե սա մարդկային նախասիրությունների արտահայտման ձև է, ապա «օբյեկտ-սուբյեկտ» և «ներհատուկ» արժեքների միջև տարբերությունը մնում է հիմնավոր, սակայն ոչ այնքան կարևոր գլոբալ որոշումներ կայացնելու համար: Մյուս խնդիրն այն է, որ սոցիալական գործողությունների համար նախապայմանները կարող են հիմնված լինել մարդկանց չպատկանող իրավունքների վրա: Կենդանիների իրավունքների պաշտպանները առանց բարդության կարող են պնդել, որ մարդկանց գործողությունները պետք է մասնավորապես առաջնորդվեն ոչ մարդ արարածների իրավունքներով: Մյուսներն անիմաստ են համարում այնպիսի իրավունքների մասին խոսելը, որոնք չեն պատկանում մարդկանց:

3. Շատ աշխատություններում շրջակա միջավայրի համար տնտեսական վերլուծությունների ունեցած դերը կասկածի տակ է դրվում: «Աճի սահմաններ» ուսմունքի կողմնակիցները գտնում են, որ տնտեսաէկոլոգիական ընդարձակված մոդելը ցույց կտա, որ տնտեսական աճը, ինչպես ավանդաբար ընդունվում էր, կայուն չի լինի: Մյուսներն այն կարծիքին էին, որ տնտեսական աճը կատարելապես իրագործվել է, սակայն դրան հասնելու ուղիները տարբերվում են՝ հաշվի առնելով ժամանակաշրջանի առանձնահատկությունները: Օրինակ՝ աճը կարող է հիմնված լինել ավելի շատ վերականգնվող ռեսուրսների օգտագործման, և ավելի քիչ՝ սպառվող ռեսուրսների շահագործման վրա: Կարող է, սակայն, գոյություն ունենալ բարձր տեխնոլոգիական տնտեսություն, որի աճը հիմնված կլինի ռեսուրսների շատ քիչ օգտագործման և բարձր տեխնոլոգիաների կիրառման վրա:

Տնտեսություն- շրջակա միջավայր փոխներգործության ավելի խորը ըմբռնումը թույլ կտա առավել լավ հասկանալ վերը նշված բոլոր տեսությունները:

ԱՐԱ ԳՅՈՒՐՋՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ.

ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

Մարդուն պարգևած *մտածելու ընդունակությունը* հնարավորություն է տալիս նրան ճանաչել իրեն և շրջապատը, տարբերակել իր գոյության և գոյատևման հնարավոր մոտեցումները, դրանց համեմատության հիմքի վրա ընտրելով լավագույնները՝ ավելի բարձր կենսամակարդակ ապահովել իր համար, շրջապատին հարմարվելու ավելի կատարյալ եղանակներ գտնել, շարունակական զարգացում ունենալ: Ընտրելու հնարավորությունը և այդ հատկության շարունակական զարգացումը, կարծում ենք, մարդակերպին շնորհված մտածելու ընդունակության կիրառման լավագույն ուղղությունը և արդյունքը կարելի է համարել:

Մարդը բնությունից օժտված է նաև *գործելու կարողությամբ*, ունի իր գոյատևման համար անհրաժեշտ տարաբնույթ ռեսուրսներով հարուստ բնական կենսամիջավայր, ինչպես նաև այդ ռեսուրսներից օգտվելու և դրանք օգտագործելու հնարավորություն: Իսկ մտածելու բնածին ընդունակությունն ու այդ հիմքի վրա ձևավորված աշխատելու կարողությունը նրան հնարավորություն է ընձեռում ուղղորդել իր գործողությունները, նպատակահարմար ձևով օգտագործել մտածելու՝ իրեն շնորհված հնարավորությունը, ծառայեցնել այն իր պահանջմունքներն ավելի բարձր մակարդակով բավարարելու խնդրի լուծմանը: Այս շարունակական գործընթացը մարդու մոտ զարգացրել և ենթագիտակցությունում ամրագրել է իր *գործողությունները գիտակցված կատարելու պահանջը և ձգտումը*:

Մարդու կողմից իրականացվող ցանկացած գործողություն պետք է գիտակցված լինի, քանի որ վերարտադրության պահանջը բնազդորեն հանգեցնում է որևէ նպատակով կատարվող գործողությունում նույն արդյունքի համար ծախսել հնարավոր քիչ էներգիա, որը գոյատևման պայմանով վերարտադրվելու է: Իսկ դա նշանակում է, որ այդ գործողությունները պատահական, ինքնաբերաբար, չնախատեսվող չեն, այլ ծառայելու են ինչ-որ արդյունքի ստացման, որի կարիքն ունի տվյալ անհատը: Այսինքն՝ նրա կողմից կատարվող ծառայությունները *նպատակային-արդյունքային* են: Հակառակ դեպքում դրանք արդարացված չեն, հավանական է նաև, որ պատճառ կարող են հանդիսանալ այդ անհատի համար որոշ կորուստների: Մարդ անհատի պարագայում, որպես մտածելու ընդունակություն ունեցող էակի, այդ նպատակային գործողությունները նաև մտածված, այսինքն՝ գիտակցական պետք է լինեն: Հետևաբար, *նպատակայնությունը և բարձր արդյունքայնությունը* գիտակցված գործունեության անհրաժեշտ պայմաններ և այն իրականացնելու հիմնարար սկզբունքներ են: